

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե**  
**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 21/4**

**23 ապրիլի 2014 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Լյովա Հակոբյանի 26.03.2014 թ-ի բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 20.03.2014 թ-ի թիվ 2220464 արձանագրության դեմ:

**Ա/Ձ Լյովա Հակոբյանի բողոքում բերված փաստարկները.**

1998 թ-ի գրանցվել են որպես անհատ ձեռներեց, կատարել են լուսանկարչական ծառայություն Նոր Հաճնի Թումայան 7 հասցեում: Սույն թվականի մարտի 19-ին, ժամը 12:00-ի սահմաններում ես գտնվում էին Նոր Հաճնի գերեզմանատանը, իսկ լուսանկարչատանը հերթապահում էր կինս: Օգտվելով այդ «բարենպաստ պահից»՝ Նաիրիի ՏՀՏ աշխատակից Աննա Ավագյանը շտապ լուսանկարահանվում է, իսկ Արտյոմ Աբրահամյանը ուս Ասրամ Գաբրիելյանը անմիջապես մտնում են և ՀԴՄ-ի Շ հաշվետվություն են պահանջում՝ չհամբերելով իմ վերադարձին: Ես վերադարձա, հսկիչներին բացատրեցի իմ բացակայության պատճառը, հետագայում նաև Նաիրիի ՏՀՏ հսկողության բաժնի պետին ներկայացրի իրավիճակը, բայց ապարդյուն, ինձ ասացին, որ պետք է արձանագրվի խախտում ՀԴՄ կտրոն չտրամադրելու համար, որի չափն է 150.000 դրամ: Դա հավասարազոր է կործանման մի ձեռնարկության, որի ամսական շրջանառությունը մոտ 120.000 դրամ է: Ելնելով ստեղծված իրավիճակից՝ սույն թվականի մարտի 24-ին լուծարեցի ա/ձ-ն, խնդրում եմ չեղյալ համարել մարտի 19-ին ստուգման հետևանքով առաջացած պատասխանատվությունը:

**ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ կառավարության 26.08.2004թ. «Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնները հաստատելու մասին» N1325-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների 19-րդ կետի համաձայն՝ պատասխանատու անձը պարտավոր է հաշվիչ սարքի միջոցով մուտքագրել դրամական գումարը, որոշել ընդհանուր գումարը և տեղեկացնել գնորդին, պատվիրատուին և այլն, ՀԴՄ-ի միջոցով տպել և գումարն ստանալու պահին ապրանքի հետ միասին գնորդին, պատվիրատուին տրամադրել դրամարկղային կտրոն, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային վարչարարությանն օժանդակության նպատակով վիճակահանության անցկացման ժամանակահատվածում՝ ժապավենի դարձերեսին հատուկ համար (համարներ) պարունակող չեկ (կտրոն): Ընդ որում, ծառայությունների մատուցման դեպքում չեկը (կտրոնը) տրամադրվում է այդ ծառայության դիմաց կանխիկ վճարում (ներառյալ կանխավճար) ստանալու պահին:

Քննարկվող դեպքում հսկիչ գնումը կատարվել է 19.03.2014թ. ք. Նոր Հաճն, Թումայան 7 հասցեում տեղակայված լուսանկարչատանը, կատարվել է լուսանկարում 1000 դրամ արժողությամբ, սակայն մատուցված ծառայության համար վճարված գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և չի տրամադրվել ՀԴՄ կտրոն: Հարկ ենք համարում նշել, որ

քննարկման ժամանակ Ա/Ձ Լյովա Հակոբյանը ևս չժխտեց հսկիչ գնում կատարված լինելու և ՀԴՄ կտրոնը տրամադրված չլինելու փաստը:

Միաժամանակ, «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքով սահմանված պատասխանատվության կիրառման համար հիմք է հանդիսանում նաև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացված ուսումնասիրության արդյունքում արձանագրված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտումը: Տվյալ դեպքում, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի N2 հավելվածով հաստատված կարգին համապատասխան հարկ վճարողի մոտ իրականացվել է հսկիչ գնում, որի արդյունքում արձանագրվել է ՀՀ կառավարության 26.08.2004թ. «Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնները հաստատելու մասին» N1325-Ն որոշման հավելվածի 19-րդ կետի ենթակետի խախտում: Գանձատի քննության օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածին համապատասխան՝ նույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության միջոց չի կիրառվել, քանի որ 24.03.2014թ. Ա/Ձ Լյովա Հակոբյանը պետական ռեզիստրում որպես անհատ ձեռնարկատեր հաշվառումից հանվել է:

Հանձնաժողովի 08.04.2014 թ-ի նիստի քննարկման արդյունքում սույն գործի վերաբերյալ ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն արձանագրությունը թողնվել է անփոփոխ:

Ի կատարումն ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Գանձատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանձատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը և առնչվող նյութերը (գանձատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանձատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանձատարկման խորհուրդ):

Որոշման նախագծի վերաբերյալ Գանձատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

## ո թ ո շ ու մ է՝

Արձանագրությունը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ